

*2009թ. Լեւնային Ղարաբաղի հասարակությունը կտոնի Արցախի պետական համալսարանի 40-ամյակը: Այս առումով ծրագրվում է հրատարակել լայնածավալ ուսումնասիրություն համալսարանի անցած ուղու, հանրապետության կրթական, սոցիալ-մշակութային և քաղաքական կյանքին նրա մասնակցության մասին:*

*ԱրՊՀ 40-ամյակին նվիրված հոդվածաշարը տեղեկագիրը իրականացնում է ԱրՊՀ, նախկինում Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի առաջին թեկտոր, պրոֆեսոր Ե.Մ. Աբրահամյանի և պրոֆեսոր Ս.Վ. Դադայանի «Մոզիալ-քաղաքական իրադարձությունները Լեւնային Ղարաբաղում՝ Ստեփանակերտում Ադրբեջանի մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղի բազման պահին» հոդվածով:*

ԱԶԳԱՅԻՆ-ԱԶՆԱՍԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԹԵՎ ՇՅԱՆԸ

Ս.Ա. Խանյան

Յուրաքանչյուր բարձրագույն ուսումնական հաստատություն ոչ միայն իրականացնում է տնտեսության տարբեր բնագավառների համար մասնագետներ տատարաստելու գործը, այլև մեծապես նպաստում է ազգային գաղափարախոսության ծնավորմանը և անհրաժեշտության դեպքում ակտիվորեն մասնակցում ժողովրդի ազատության և անկախության համար մղվող պայքարին:

1988թ. սկզբից, երբ արցախախայությունը ոտքի ելավ մայր Հայաստանի հեն վերամիավորվելու պահանջով, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի կոլեկտիվը, որն ուներ նաև ադրբեջանական բաժին, երկփեղկվեց: Ադրբեջանցի դասախոսները համախմբվեցին ինստիտուտի ուսումնական և գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Ն.Կուլիևի շուրջը: Նա ստեղծել էր «Գորշ գայլեր»-ի խումբ: Նրանք բացեցին ինչպես հայ դասախոսներին. «Եթե չեք ցանկանում մնալ Ադրբեջանի կազմում, կարող եք թողնել Ղարաբաղը և հեռանալ»: Ադրբեջանցի դասախոսները մեկնում էին Ադրբեյ, Ֆիզուլի, Ջաբրայիլ, Կուբաթլու, Լաչին, Եվլախ, Բարդա, Միրբաշիր, Բյայբաջար և թուրք բնակչությանը հրահրում հայերի դեմ, կոչ անում զինվելու:

1988-ի փետրվարի 27-ի առավոտյան Սումգայիթում սկսված զեղասպանության սև բոթը թրի պես խոցեց ինչպես ողջ հայության, այնպես էլ մեր բուռի հայկական բաժնի դասախոսների և սովորողների սրտերը: Դրությունը դարձել էր պայթուցիկ: Ազգերի դասախոսները և ուսանողները իրենց պահում էին պատժողի և հաղթողի դերում:

Սումգայիթյան ողբերգությունից հետո այնևս հնարավոր չնկատվեց շարունակել երկու բաժինների համատեղ աշխատանքը: «Անհանգստացած» էին կոմկուսի մարզային կոմիտեի դրածո ղեկավարները և ՊԱԿ-ի աշխատակիցները: Նրանք անընդհատ հիշեցնում էին ժողովուրդների «լենինյան բարեկամության» մասին: Հայ դասախոսները հոգեմել էին առանձնապես ՊԱԿ-ի ղեկավարների այցելությունից: Նրանք հաճախում էին ինստիտուտ, դասախոսական կազմին հրավիրում դահլիճ և հայերին մեղադրում «դաշնակցական ազգայնամոլական գաղափարախոսությամբ վարակվելու, ազգամիջյան թշնամանք սերմանելու» մեջ: Միաժամանակ հանգիստ չէին տալիս Ադրբեջանի կառավարող շրջանները՝ հանրապետության Գիտության և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության հրահանգներով: Նրանք ամեն կերպ ձգտում էին սրել հակասությունները՝ հայերին մեղադրելու նպատակով:

Բարոյահոգեբանական մթնոլորտը շիկացել էր: Ուսանողների մի խումբ, որ ընդհատակյա միություն էր կազմակերպել Ս.Շահվերդյանի ղեկավարությամբ, նսանդուն աշխատանք էր տանում: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի մի շարք ներկայացուցիչներ իրենց

հասարուժում էին ազգային ազատագրական պայքարի մարտիկներ: Քրոջակիցներ էին գալիս Մոսկվայից, Լենինգրադից՝ Բարձուս մկրտվելով աղքեծյանական թարգելության կնդրաշարով: Նրանք մեր ինստիտուտում նախ հանդիպում էին ոչ անհայտ պրոմեկտոր Ն.Լյուլինի հետ, նրա գալիստատսնյակ հրավիրում կուսբյուրոյի քարտուղար Բ. Չաբայցովին և ազերի մյուս դասախոսներին: Նրանց ելույթներում անդադար չենում էին «ակադեմիկոս» Ջ.Գուսյարովի պատմական կելծիքը, յոթ իբր «Լարսարադի հայերը եկվորներ են, Ղարսբաղը այբանական-աղքեծյանական հող է, հողից բաժին չեն տալիս»: Ազերի վայ գրականագետներն ու պատմաբանները առանց խղճի խայթո գզալու, գրում և հայտարարում էին, որ աղքեծյանական մշակույթի ներկայացուցիչներ են Մ.Լազարևկատվացին, Գ. Բոլորոջը, Մ. Գոռը, Կ.Գանձակելցին, վարդան Արևելցին, Նաչյի Հասան-Ջալալյանը, մի խոսքով բոլոր նրանք, ովքեր ծնունդով Հայոց Արևելից կողմանքից են: Հայ դասախոսները պատասխանում էին ըստ Լույսյան:

1988թ. փետրվարի 13-ին հայկական բաժնի 1000-ից ավելի ուսանողներ լոզունգներով, տրանսպարանտներով գնացին այն ժամանակ Լենինի անվան հրապարակ՝ մասնակցելու համարադրարային հանրահավաքին: Ռուսնողներին և դասախոսներին այդուհետ կարելի էր տեսնել հանրահավաքներում և շքերթներում: Կրակոտ ելույթներ էին ունենում դասախոսներ Հ.Գրիգորյանը, Գ. Աֆանասյանը, Ա. Մխիթարյանը, Հ. Մովսիսյանը, Ս. Գաղաթյանը, Կ. Արամյանը, Ռ. Ռալայանը, Ե. Աբրահամյանը, Ս. Ազազնյանը, Լ. Գրիգորյանը, սողներին հեղինակը և որիչներ:

Հայ դասախոսները հստակ պատկերացնում էին իրենց անելիքները: Ծրագրված էր.

1. Կազմակերպել ուսանողության մասնակցությունը շքերթներին և հանրահավաքներին:

2. Կապեր ստեղծել Ատեմիանակերսի մանկավարժական ինստիտուտի և Հայաստանի բուժների ուսանողության միջև՝ ազատագրական պայքարին ակտիվորեն մասնակցելու նպատակով:

3. Հանդես գալ հանրահավաքներում, Ստեփանակերտ ժամանած քաղաքական և հասարակական գործիչների առջև շարժման պատճառների և նպատակների վերաբերյալ:

4. Գրափոր պատասխանել ազերի վայ պատմաբանների և գրողների ստահող ելույթներին՝ Արգալը աղքեծյանական-ամանդական տարածք հայտարարելու, հայկական նյութական և հոգևոր մշակույթի հուշարձանները սեփականելու դեմ:

5. Հետազոտել և նամակներ հղել ԽՍՀՄ կենտրոն, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ, ԽՍՀՄ նախարարների խորհուրդ և այլ ատյաններ:

6. Պատրաստել պայքարի բովանդակությանը վերաբերող կարգախոսներ, լոզունգներ, տողացույցներ: Այդ աշխատանքը կատարում էր նկարիչ Լ. Ղալայանը:

7. Անհրաժեշտության դեպքում կազմակերպել դասադուլներ, նստացույցներ, հացադուլներ:

8. Պատրաստ լինել դիմակալելու թշնամու ոտնձգություններին և հարձակումներին:

9. Մասնակցել մոլորդական քանակագույններին և հարձակումներին:

Անմիջապես ձեռնար, որ 1988-ի մայիսի 2-ին Արգալից Մոսկվա ժամանած բանագնացների խմբում եղել են մեր բուհի դասախոսներ Հ. Գրիգորյանը, Ա. Մխիթարյանը և Լ. Ղալայանը:

Ջգալով հայ դասախոսների և ուսանողների վճռական պայքարի նշանակությունը, Աղքեծյանի ղեկավար շրջանները ձգտում էին հանգցնել ընդվզումի կրակը: Նրանք ջանում էին հաշտեցման եզրեր գտնել և շարունակել համատեղ պարագայունքները: 1988-ի ապրիլ ամսվա սկզբին Շուշիից, Աղքալից և այլ շրջկենտրոններից հատուկ ավտոբուսներով Ստեփանակերտ տեղափոխեցին աղքեծյանական բաժնի ուսանողներին: Սակայն տեղի ունեցավ անսպասելին: Մաչիսի սկզբին Շուշի քաղաքից ազերի «հարևանները» հայ բնակիչներին ծնծեղով, թալանելով, վտարեցին իրենց բնակարաններից: Ստեփանակերտը բորբոքվեց: Շուշիից բռնագաղթյալների դրությունը ցնցել էր բոլորին: 150-ից ավելի ստեփանակերտցի երիտասարդներ մտան ինստիտուտ, միացան հայ ուսանողներին և խաղաղությանը առաջարկեցին ազերի ուսանողներին հեռանալ քաղաքից: ՊԱԼ-ի աշխատակիցները գարսացել էին հայ երիտասարդների զսպվածությունից: Աղքեծյանական բաժինը տեղափոխվեց Շուշի, իսկ 88-ի նոյեմբերի սկզբին հայկական բաժինը մեկնեց Կիրովական:

Սպիտակի 88-ի ղեկավարների 7-ի ներկաշարժից կիսախարտուլ դարձավ Կիրովականի մանկավարժական ինստիտուտի շենքը: Մեր կոնկուսիզ ղեկավարների 8-ին վերադարձավ

Ստեփանակերտ: ԼՂ կառավարման հատուկ կոմիտեն (ղեկավար Ա.Վոլսկի) կայացրեց այլընտրանքային որոշում՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը կոչել կիրթվածների պետական մանկավարժական ինստիտուտի բաժանմունք:

Ուժեղացրեցին նաև հրթիռակոծումների տարափի տակ շարունակվում էին պարագամուսնները: Բաժանմունքը փաստորեն դարձել էր ինստիտուտի իրավահաջորդը և իրականացնում էր սնանկացման ամենամյա թողարկումը: Այսպես, 1987-1988 ուս. տարում թողարկվել է 266 մասնագետ, 1988-1989-ին՝ 229, 1989-1990-ին՝ 260, 1990-1991-ին՝ 239, 1991-1992-ին՝ 146: Միաժամանակ ավելի բուռն էր դառնում գաղափարական պայքարը, որի ակունքների ստա կանգնած էր Հ.Վ.Գրիգորյանը: Նա մարտնչում էր համատեղ և իր կենցաղով օրինակ հանդիսանում ընկերների համար: Ծարձան հենց առաջին օրվանից գաղափարական պայքարի հորձանուտի մեջ էին կին դասախոսներից՝ Ա.Մխիթարյանը, Լ.Գրիգորյանը, Մ.Ղազարյանը և այլք: Նրանց ստորագրություններ էին հավաքում դասախոսներից՝ ի պաշտպանություն Արցախը մայր Հայաստանին վերամիավորելուն, նամակներ և հեռագրեր էին հղում Մոսկվա՝ պահանջարկության հրամայակնով: Մեր դասախոսները հանդես էին գալիս նաև մամուլի էջերում: Այդ առումով ջերմ արձագանք է գտել Հ.Գրիգորյանի, Ա.Մխիթարյանի և Լ.Գրիգորյանի համատեղ հոդվածը՝ «Ստեփանակերտի Դարաբաղ» թերթի 1988-ի մարտի 18-ի համարում:

Աղբրեցանական մամուլը հեղեղված էր Արցախի պատմությունը գեղծող ստառող հոդվածներով:

1988թ. փետրվարի 28-ի համարում «Բակինակի րաբոչի» թերթը տպագրել էր հայտարարություն այն մասին, որ պետական մրցանակի է ներկայացվել Դ.Ա.Ախունդովի «Աղբրեցանի» հին և միջնադարյան ճարտարապետությունը» գիրքը: Դա մի «աշխատություն» էր, որտեղ հեղինակը պարզապես հայ ճարտարապետական կոթողները ներկայացրել է որպես աղբրեցանական հին հուշարձաններ: Նա ցինիկորեն աղբրեցանական է համարում՝ պատմական Հայաստանի Արցախ, Ուտիք, Սյունիք, Վլայոց ձոր նահանգների ճարտարապետական կոթողները, Ամարաս, Գանձասար, Դաղվանք և հին ու միջնադարյան այլ վանքերն ու եկեղեցիները:

Մեր ինստիտուտի գիտնական-մանկավարժները ծանոթանալով այդ «աշխատությանը», հանձնարարեցին պատմաբան Մ.Ղազարյանին և տողերիս հեղինակին՝ կազմակերպել բողոքի նամակ գիտական հիմնավորումներով: Մենք պատրաստեցինք այն և մի խումբ դասախոսների ստորագրությամբ հղեցինք ՍՄԿԿ կենտրոնի գիտության բաժին, ԽՍՀՄ ճարտարապետների միություն, Հայաստանում բուստրենի հրատարակվող «Կոմունիստ» թերթի խմբագրություն և Հայկական ՄՍՀ գրողների միություն: Նամակ-բաղդը մեր գաղափարական աշխատանքի խոսուն վկայություններից էր: Դ.Ա.Ախունդովի «աշխատությունը» ամենուրեք ենթարկվեց խիստ քննադատության՝ հատեն ճշմարտության և արդարության: Կարևոր ենք համարում հիշել նաև 1988թ. ապրիլի 28-ի միջադեպը: Ինստիտուտի կուսբյուրոյի քարտուղար Բ.Ֆարաջովի և բյուրոյի անդամ Ն.Կուլիկի արձամբ պետք է նշվեր Աղբրեցանում սովետական կարգերի հաստատման 68-րդ տարեդարձը:

Դա այն ժամանակ էր, երբ երկու ասիս առաջ տնդի էր ունեցել Սուսգայիթի ցեղապահությունը: Ամեն ղեկըրում կազմակերպվեց ցերեկույս: Տողերիս հեղինակը, իմ զեկուցման մեջ, դասախոսներ Ա.Դադարյանը, Ծ.Արքահամյանը իրենց ելույթներում գայրույնով նշեցինք, որ Սուսգայիթյան ցարդերը պետք է որակվեն որպես ցեղապահություն, որ այն սև բիժ է արբրեցանական ժողովրդի պատմության մեջ: Մեր այդ ճշմարտացի որակումը «վրդովմունքով» ընդունեցին ազերի դասախոսները և հեռացան դահլիճից:

Այլ կերպ չէր կարելի սպասել: Այդ նրանց խորհրդով էին իրենց ուսանողուհիները 1988-ի փետրվարի 28-ին ներկայացել դասի՝ վարսերին կարծի ժառգվածների փնջեր և ցարդով ու պատառտելով գրակնություն կարեկնուի գուցափեղկերը և հայ գրողների նկարները:

Մեր ինստիտուտի հայ դասախոսների գաղափարական պայքարի կարևոր էջերից կարելի է համարել այն Դիմումը, որ ուղարկվեց ՍՄԿԿ կենտրոնի քաղքրոյոյին, ՄՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը, միութենական հանրապետությունների կլ կենտրոններին, կուսակցության ՌՍԽՍՀ մարզային կոմիտեներին, ինքնավար հանրապետություններին և ինքնավար մարզերին: Դիմումը որակեց բողոք գրվել է ՍՄԿԿ կենտրոնի քարտուղար Լիգաշովի

պրովոկացիոն հայտարարության կապակցությամբ, որն արել է Ադրբեջանի կլ կենտրոնի պլանումից հետո մարզկոմների և շրջկոմների հետ ունեցած հանդիպման ժամանակ: Նա հայտարարել էր, որ ԴԿԻԲ-ի հայերի պահանջը անլուծելի է, քանի որ այն կապված է «ադրբեջանական գործոնի» հետ: Դրանով իսկ Լիզալովը արդարացնում էր Սուվզայիթը և ջուր լցնում ադրբեջանական ագրեսիայի ջրաղացին: Դիմումի պատրաստմանը մասնակցել են Հ.Գրիգորյանը, Ս.Դադայանը, Ա.Մխիթարյանը, Կ.Արամյանը և տողերիս հեղինակը: Դիմումը կարդացվել և ընդունվել է Ստեփանակերտ քաղաքի Հաղթանակ (այժմ՝ Ազատության) հրապարակում 1988-ի մայիսի 28-ին տեղի ունեցած 30 հազարանոց հանրահավաքում: Նման բովանդակությամբ մի նամակ էլ մեր մի քանի դասախոսների ստորագրությամբ ուղարկվել է ԽՍՀՄ կլիսավոր քարտուղար Մ.Ա.Գարբաշովին: Դեռևս արգախյան ազգային ազատագրական պայքարի նախօրեին ադրբեջանական մամուլը հաճախակի էր տպագրում Զ.Բունյաթովի ստահոջ հոդվածները Արցախի պատմության վերաբերյալ, որոնցում կեղծելով ճշմարիտ պատմությունը, նա ձգտում էր ապացուցել, որ Արցախը ազերական հող է, որ հայերը տեղաբնիկ չեն, որ նրանք Ղարաբաղ են եկել 1826-1828թթ ռուս-պարսկական պատերազմից հետո: Անհրաժեշտ էր պատասխանել նաև պահպուրիքի գալ այդ ոչ անհայտ գաղափարախոսին: Այդ գործը հանձն առանք տողերիս հեղինակը և Ս.Դադայանը: 1989-ի մայիսի 23-ի համարում «Ատրիդային Ղարաբաղ» թերթը տպագրեց մեր ծավալուն հոդվածը՝ «Ճշմարտությունը ամեն ինչից վեր է» վերտառությամբ: Այն զետեղվել է նաև «Советский Карабах» թերթում: Նրանում կարևոր փաստերի հիման վրա ներկայացվել է Արցախի հայաշունչ պատմության ընթացքը, Ադրբեջանի քաղաքական ուժերի և վայ գիտնականների ոտնձգություններն ու զրգարողությունները նրկրամասի հայ ազգաբնակչության հանդեպ, որի պատճառով էլ Արցախը ոտրի է ելել վերամիավորվելու մայր Հայաստանին:

Ըստ չանցած, ադրբեջանական մամուլը վայնասուն քարձրացրեց մեր դեմ, մեզ անվանելով Ադրբեջանի պատմության զեղծարարներ և ծախիստներ:

Մեր կողմից կի գաղափարաքաղաքական աննահանջ պայքարի տարեգրության փայլուն էջերից մեկն էլ 1990թ. ապրիլի 24-ին 1915թ. Եղեռնի գոհերի հիշատակին կազմակերպված միջոցառումն է: Պլյանայիչկո-սաֆոնովյան ռեժիմի հրահանգով քաղաքում արգելված էին հանրահավաքներն ու շքերթները: Սակայն շարժման ակտիվ մասնակիցները թույլտվություն էին ստացել՝ զոնե այցելել Հայրենական պատերազմի գոհերին նվիրված հուշահամալիր և հիշել 1915-ի Եղեռնի գոհերին: Առիթն առկա էր: Հ.Գրիգորյանի մտահոգմամբ համալիրում, շաղիռումիտին աշխատակիցների աչակցությամբ (նրանք տրամադրել էին բարձրախոսներ) տեղի ունեցավ հանրահավաք: Այն բացեց Հ.Գրիգորյանը, ապա ելույթներ ունեցան դասախոսներ Ռ.Ռայայանը, Ա.Թովմասյանը, տողերիս հեղինակը: Մեր խմբին էին միացել պոետներ Գ.Գաբրիելյանը և Հ.Բեզլարյանը: Հանրահավաքին ներկա է եղել Ռ.Քոչարյանը: Մենք և դատապարտում էինք 1915-ի ցեղասպանությունը, և կոչ անում ժողովրդին շարունակել պայքարը ադրբեջանական բռնատիրության դեմ:

Ննց նույն օրը մեզ կանչեցին քաղաքի պարետատուն, իսկ ապրիլի 26-ին հատուկ մերձայտով տարան պոմպակայան, որ վերածվել էր բանտի: Ես նոր էի դուրս եկել հիվանդանոցից: Հ.Գրիգորյանի և Ռ.Ռայայանի պահանջով ինձ պատժեցին 15-օրյա տնային կալանքով, իսկ մյուսներին որոշել էին ուղարկել Ծուլլի բանտ: Ժողովրդի պահանջով տնային կալանք տվեցին նաև Ռ.Ռայայանին, Գ.Գաբրիելյանին և Հ.Բեզլարյանին: Իսկ Հ.Գրիգորյանին և Ա.Թովմասյանին տեղափոխեցին Պյատիգորսկ քաղաքի բանտը՝ մեկ ամիս ժամկետով:

Մեր ինստիտուտում գաղափարական պայքարը նրբեր նրկրորդական պլանի վրա չի մղվել: Դասախոսները և ուսանողները պայքարի տարբեր ձևերով ու միջոցներով շարունակել են մարտնչել հանուն Արցախի անկախության և ազատության:

Համոզված եմք, որ մեր թուխ գաղափարաքաղաքական պայքարի մասին գրվելու է ոչ մեկ անգամ, որովհետև այն մեր պատմությունն է՝ որպես օրինակելի դաս գալիք սերունդների համար, որպես Արցախ աշխարհի ազատագրման ճանապարհի առաջավելված վավերագրություն: